

ԼԵՋՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԵՐԸՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՄԷՋ

(տպ. Թիֆլիս 1914)

(Շար. տես Բազմալեզ 1924, էջ 80)

Լայնապարիսպ «լայն պարիսպներով»։ Անբաժանելի է անորոշ յօրինելով, ցանկ հաստատելով և խորհրդի (տպ. խոնարհիմն!), հաստատարակ, լայնապարիսպ ամբափակելով (էջ 156)։

Խաչահամարյո « քահանային տրուած դրամական վարձատրութիւն »։ վկայութիւնը տես իշխան քառին տակ։

Խնդրական. ասոր վկայութիւնը տես դիւափոխի. ՆՀԲ գիտէ այս բառը՝ նորն վկայութեամբ. բայց բացատրութիւնը այնպէս կը դնէ՝ որ խօսքը կարծես մարմնական պակասութեանց մասին է. ստիկա խեղ արմատին պատճառով յառաջացած է. բայց յայտնապէս սխալ է, որովհետեւ մարմնական խեղութեանց պատճառով ա՛մ մուտինը չի կրնար սուգանքի և պատժի ենթարկուիլ։ Ուստի բառը կ'ուղղեմ իւնասկան «անասն»։ որուն հոմանիշը իւնասկան տես Առաքել Սիւնեցւոյ նոր բառերուն մէջ։

Ծնողանարգոյ « իր ծնողները անարգող նախատող »։ Թէ ծնողանարգութեւ, Թէ լեզուանիք, Թէ զաղբառս ոչ ընկալաւ (էջ 94)։

Կարձեան « դրամի անուն մը »։ Իսկ որք ի գազանն և յանասունն յանդգնին . . . քահանայն տեղեկացեալ՝ զանեացէ առժամայն և Յ կարճեանն յաղբառս տացէ և 300 ծնարգութիւն (էջ 91)։ Յանցանքին մեծութենէն և Յ Թուանշանին փոքրութենէն կ'երևայ որ կարճեանը բաւական մեծաբոլէք դրամ մը ըլլալու է։

Կափանք « հաշոց, հաշիւն »։ Եթէ ոք ի քահանայից ի գնել կամ ի վաճառել կրթեսցին կամ ի շխանութեամբ ի իշխանաց

վարձեսցին՝ հարկապահանջն լինելով . . . այնպիսիք մի՛ լիցին քահանայք, այլ աստուածախարք. պատարագ նոցա կափանք շանց, մկրտութիւնը նոցա որպէս թլփաւ տութիւն հրէի, տունը նոցա որպէս մեհանք զիւաց, եկեղեցիք նոցա կրկին օրհնեսցին (էջ 90)։

Համասփոսական « համատարած », ամէն կողմ սփռուած »։ Նոր զատիկ աւետեաց յարութեան, համասփոսական տիեզերաստարած և լուսասփիւռ, հրեշտակաբարոզ և առաքելաբարբառ պատմի (էջ 160)։

Հաստայտակ « տակը՝ այսինքն հիմք հաստ՝ ամուր »։ վկայութիւնը տես լայնապարիսպ քառին տակ։

Հարկադրանք « ստիպմունք, բռնադատութիւն »։ Որք յանցեանն և անցին ընդ կարգօք ո՛չ հարկադրանք կամ առանց բռնութեան (էջ 261)։

Հմայ « հմայող, կիսարդ »։ Առաւել ջան տարցեն եպիսկոպոսը և ըրեպիսկոպոսը զպոռնիկս և զշնացողս, զհմայս և զամեհայն յանցաւորս զհնէնին երկիւղիւ ի դարձ ածել (էջ 176)։

Հոգնիք « հոգին ձիւրքերով օծտուած, կամ Ս. Հոգւոյն ձիւրքերով լցուած »։ Սրբոց քահանայապետացն Սահակայ Հայոց կաթողիկոսի և հոգնից և հոգեծիր հմարտասէր վարդապետին Մեսրոպայ (էջ 57)։

Հրեւականքարոզ « հրեշտակներէն քարոզուած »։ վկայութիւնը տես առաքելաբարբառ քառին տակ։

Ձեռնադորոտիւն « սպասաւորութիւն, ծառայութիւն »։ Քահանայ այլ գործ չառնէ, պարտին ձեռնաւորութիւն կամ մուճրութիւն (էջ 185)։ Նորն բառը կը գտնենք նաև Մրենի Զիթ — 1320 Թուի արձանագրութեան մէջ. « Խմ ամիրութեանն և Առաշիին ձեռնաւորութեան՝ զայս արձան հաստատեցաք » (Մատ, ՅՅՕ 8, 89)։ Բառիս արմատն ունի ձեռնաւոր Ուռպ. տպ. էջ 240, 266, 306, որ Մատ կը կցէ վրաց. խելաւոր հոմանիշին, կազմուած իւրի « ձեռք » բառէն։ Ինճիճեան, Հնախ. Բ. 81 ասոր նշանակութիւնը կը գնէր « իշխան, զլիաւոր », օրինակ բերեւ.

լով Մեծոփ. յիշատ. էջ 53. Ժողովեցան և բազում միայնակեացք և ազատք և որդիք ազատաց, ձեռնաւորք և տանու տէրք»։ Բառիս վրայ կը խօսի նաև Գառնգին վրդ. (Շողակաթ, էջ 34-35), ի մէջ այլոց օրինակ բերելով 1288 թուի արձանագրութիւն մը. «Եւ Գէշմարդս էի ամիրայ և Հաւիկս ձեռնաւոր... թողաք զսորբ կարապետին այգեացն, զՅօշակաւնու, զՄիրիսու զձեռնաւորին զհարկն զինչ որ կայր»։ Բոլորէն կը հետեւի որ ձեռնաւոր «մի ստորին պաշտօնեայ էր հարկերի հաւաքման գործում, որ ի կատար էր ածում պարոնի հրամանները»։

Մելամազեաց «աննաակ»։ Կնքահայրն (լիցի) ո՛չ կին, ո՛չ այլազգի, ոչ յիշոցնատու, ոչ մելամազեաց, այլ լաւ քրիստոնեայ և զիտուն (էջ 183)։ Նոյնպէս է նաև Շողակաթ, էջ 38, 43, ուր հրատարակիչը Գարեգին վրդ. կը նկատէ թէ Երզնկացին իւր խմբագրութեան մէջ բառս թարգմանած է «շնացող»։

Միտտեղի «հաւաքուի»։ Առնել ժողով ի Մանազկերտ զեղջ ի սահմանազուխ վիճակին Հարքայ՝ քաղմօրեայ ժամանակաւ միասեղեակ համաժողով (էջ 149)։

Մուրադիան «ծառայութեան աստիճան մը»։ Վկայութիւնը տե՛ս ձեռնաւորարան. Գարեգին վրդ. (Շողակաթ, էջ 35) կը մեկնէ «բնական բերքերով վճարուած հարկերու վրայ հսկող պաշտօնեայ», հիմնուելով զու. մուճուր բառին վրայ, որ կը նշանակէ «հարսանիքի զինու և պաշարների վրայ հսկող անձը»։ — Կ'երևայ թէ արաբ. جاجر majur «վարձակ, վարձքով բռնուած» բառն է, բայց յձայնը դժուարութիւն կը հանէ։

Մուկ «մի մոլի, մարմնապաշտ»։ Գետնաքարշ մամուլ իցէ և ի պատճառս բարեպաշտութեան կեղծաւորեացի, սիրել և հպարտացուցանել զազգայինս իւր (էջ 42)։ — Հոս նախադասարար գործածուած է անոնց համար՝ որ իրենց ազգականները միայն կը սիրեն ու կը պատուեն։

Յարպուցեալ «մշտալառ»։ Հոյր աստուածաբարբը և տունկը աստուածածաղիկը

և հրագունը յարաւուցեալը, յորս Հոգին սուրբ հանապազ բուրէ (էջ 161)։

Յիշատաց «հայհոյող»։ Յամենայն տեղիս ի մի՛ծ և ի փորբը, յիշոցաւազ դնեն, ի դարպասս, ի քաղաքս, ի գիւղս և յաւաքարկս և (տպ. ի) զանօրէն յիշոցասացս, զբարկութիւն Աստուծոյ շարժողս... զայնպիսեացն զլեզուսն հատցն (էջ 177)։ — Տպագրուած է սոսկալի աղճատմամբ. «ի մեծ և ի փոքր յիշոց, աւագ դնեն ի դարպասս», որմէ ամենեկին իմաստ մը չ'իլլեր։ Կանոնս նոյն է կիրակոս Գանձակեցւոյն մէկ հատուածին հետ, որ ամբողջապէս մէջ բերած ենք Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, էջ 80։

Ործոյն «փսխուը»։ Զլիս գիշերին թերևս արբեցութեան պարապիս... անկեալ պարպատիցես ընդ երկ թասելով (տպուած է այսպէս. հրատարակիչը կը սրբագրէ էջ 272՝ երկրասկիւղ, որ անմիտ է. աւելի լաւ է պահել եղած ձևով) և թառանչելով և ի պղտորութենէ որովայնի ործունաց և սաստիկ գոլորշեաց, որ և զձայն անգամ լսել պաշտաման դժուարանաս (էջ 49)։ Մեր բառը տպուած է որձանաց. բայց որովհետև յայտնապէս նոյն է ործով «փսխել» բառին հետ, պէտք է ուղղել ործուաց, ուղ. ործոյն. մասնիկին համար հմտ. ողջոյն կրնանք սակայն կարդալ նաև ործանք, ործանաց։

Ուղղակորդ «կարգը՝ կանոնը ուղիղ, ուղղահաւատ»։ Գրեցի... յընդունելութիւն ուղղափառաց, ի պայծառութիւն ուղղակարգ կեկեղեցւոյ (էջ 164)։

Պապարտորի. ի վեր քան զայս (Ս. Գրքի կանոնական զրբերը յիշելէ յետոյ) պատգաւորեացի առ ձեզ, զի մանկունք ձեր ուսցին զբազում իմաստութիւնս Սիրաքայ (էջ 252)։ — Մի և նոյն կանոնը կայ նաև էջ 173, ուր մեր ինդրական հատուածին դէմ կը կարդանք «և արտաքուստ պատգամաւորեացի առ ի ուսուցանել զձեր մանկունս գուսուսն Սիրաքայ իմաստութեանն»։ Թէ պատգամաւորի և թէ պատգամաւորի անյարմար ձևեր են, ուստի երկուքին համեմատութեամբ պէտք է սըր-

բազրել պատկանաւորի, որ այլուստ ծաւնօթ է և կը նշանակէ «յարմարիլ, յարմար գալ»:

Պնդնաւորի «կրօնաւորական կարգ մտնել, պնդնաւոր հագնիլ»։ Ի զինուորական զգեստուց հեռանալ, պնդնաւորեալ՝ նմանեցի հրեշտակաց՝ պաշտօնէից Աստուծոյ (էջ 232):

Սանտիկոս. Զամուսնութեան խրատն առանց ամաչելոյ տայ քահանայն և զկարեւորէն չպատկէ և ոչ զսանտիկոսն և որք բամբասած են (էջ 186)... — Շողակաթի մէջ՝ էջ 44, նոյնը՝ տպուած է սեկիոս. երկուքն ալ պէտք է ուղղել սինսեկիոս, որ է յն. ΣΥΝΤΕΚΥΟΣ «կաթնեղբայր»։ Այսպէս գիտէ նաև Գարեգին վրդ. (Շողակաթ, ծան.), որ և իբր վկայութիւն կը զնէ Գր. Տաթ. Մեկն. Ես. խզ. Ժ. Կնքահայրն, այսինքն սանտիկոսն... զի սանտիկոս զօրինակ Յովհաննու ունի զՄըկըրտչին:

Սատանայապետի «սատանայէն խաբուած»։ Անմաքուր, սատանայապետի և որովայնամու (էջ 156):

Սկիդ «ծովային գազան մը»։ Գիրք ասեն սկիդ և հիզրա ծովայինը. սկիդն շուն ասի երեքգլխեայ և հիզրա եւս չարագոյն քան զնա (էջ 84). Գիրք ասեն սկիդ և հիզրա ծովայինը, սկիդն շուն ասի երեքգլխեայ և հիզրայն չար քան զնա (էջ 162). = յն. σπύλλα «Սիկլիեան նեղուցը քարայրի մը մէջ բնակող ծովային հրէշ»։ Թառն է, որուն հնազոյն տառապարծութիւնն է սկիդ Ոսկ. Պօղ. Ա. 602 (տե՛ս Գալէմբեարեան, Մասիս 1900, էջ 403):

Սպասարկութիւն «ծառայութիւն, սպասաւորութիւն»։ Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւազ ի ժամն սպասարկութեան Ս. Խորհրդոյն ո՛չ հաղորդիցի (էջ 236). Սրտայի «սրտալիք»։ Մովսէս (Ի) Սինէակիան լերինն ի ձեռն պահօցն իբրեւ սրտալի բարեկամ խօսէր ընդ Աստուծոյ (էջ 222):

Տարածոց «ժամանակամիջոց»։ Զինչ տարածոց պահեն զտղայսն, որ մեղք չըստեսանն և յիշոցք չլսեն. — Մինչև 15

տարին զգիտացուն անարատ պահեն (էջ 183):

Տկարող «հոգին տկար, հիւանդ»։ Աստէր և տկարողի վարդան վարդապետ՝ ծառայ քրիստոնէից (էջ 180):

Յոփտեղ «ցոփ կեանք սիրող»։ Խիստը, նեղսիրտը, ցոփասէրը, յանդգունը և անգութը (էջ 228):

Փոքրապան «կրօնաւորի կամ վանքի փոքրաւոր»։ Ամէն մարդ փոքր չպահէ և զամէն որ զան չպահեն. այլ զոր խոստովանահայրն ընտրէ զփոքրապանն և զպահելոյն (էջ 187):

Քրիստոսացեալ «Քրիստոսի շնորհքին արժանացած»։ Այսուհետև ոչ ևս երախայացեալը, այլ քրիստոսացեալը, աստուածաբարբառ կրթեալը յաւետարեւր քարոզութիւնն (էջ 161):

(Շարունակելի)

Հ. ԱՅՈՒՆԱՆ

ԱԼԻԵԱՆ... ՎԱՐԴԱՆԱՅ ԵՐԻՄԻՆ ԱՌՋԵՆ
(Հետեւեալ գործիկի պատմութիւնը Պ. Հայկ Անճառնի աւ խմբագրութիւն հասած նամակն էր քաղեցք):

Հայր Սուրբ, ո՛վ որ ես, չը գիտեմ, յառապէս ինչպիսիք եմ, որ իմ կողմից ըն՝ իմ-ըն՝ իմ կերպով համբարեալ Հայր Ալեշանի ստան շիրմը, օրհնեալ խունկ ձեռն վրան, մենչև որ մի օր բազմը ժողովք ինձ և ես անմամբ անեն այդ բոլորը։ Մասիսի հողից, Արաքսի ջրէն, Արագածի ծաղիկներէն և ունիմ ցօսի, մի օր կ'ուղարկեմ և երեքը էլ բաժնի հանէք, այն անմահ նուն Հայրենասէր շիրմին, որի տակ հանգչող սիրտը իւր «Նուտագընեթով ու «Յուշիկը»նեթով «Արարեալ»ով «Սիրտան»ով զեռ ու բարախումբ Հայրենասէր համար։ Ես այս պատիւնազօր ըն՝ իմացեմ ասիթ ունեցալ քաղմիցս շրջապաշտու Մասիսի ստորոտները, Արարայրի դաշտը, Արագածի լանջերը, վաշիթ, Սևանի և Ուրմուղ ծովափերը, Անիի աւերակները, Արտազու վանքերը և մեր բնակչութիւնի շատ շատ պատմաժողովրդէ ու սրբաժայրերը, հաւատացէք Հայր Սուրբ, այդ ամենին մէջն էլ ստանաւոր և Ալեշանի հողին, լսուած է նրա ժայնը, Արարայրի դաշտից անցնում էինք 1916 թի յունիսեան մի լուսնկայ գիշեր, խոյի ձօտերք մի բլուրի ստորոտում կանգ առնք զերեւելու։ Բլուրի գագաթին չինւած է Գաշին վարդաշու մատուռը, որի վրայ ի՞նչ էր լուսնակն անուշ ցոլը։ Մենք բոլորս միասին գնացինք համբարեցինք այդ անտապան ու անյիշատակ շիրմը և յոռնկայա արտասանեցինք Ալեշանի «Լուսնկայն Գիշերձանաց Հայոց» քերթածը և սպա երգեցինք «Ո՞վ դու բարեկեցիք, Այդ անտառանայի ժամը մի կանքի ամենայն շաղկապակէց ապրումներէն մէկն է։